ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2025թ. ՆՄՈ/205 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԱՐՄԱՎԻՐԻ N10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՋԱՆՖԻԴԱՅԻ Է. ԴԱՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՎԱՐԴԱՆԱՇԵՆԻ ՄԱՅԻՍ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ N4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ N11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԱՐՇԱԼՈՒՅՍԻ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՀՈՎՏԱՄԵՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՎԱՆԱՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 5.4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 17-ի ՆՄՈ/608-Ա և ՆՄՈ/609-Ա, 2025 թվականի հունվարի 3-ի ՆՄՈ/2-Ա, ՆՄՈ/19-Ա, ՆՄՈ/20-Ա, ՆՄՈ/21-Ա և ՆՄՈ/23-Ա, 2025 թվականի հունվարի 31-ի ՆՄՈ/192-Ա և ՆՄՈ/193-Ա որոշումները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N7 հավելվածի «Արմավիրի N 10 հիմնական դպրոց», N10 հավելվածի «Ամասիայի միջնակարգ դպրոց», N41 հավելվածի «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», N44 հավելվածի «Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց», N49 հավելվածի «Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց», N54 հավելվածի «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց», N66 հավելվածի «Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց», N83 հավելվածի «Հովտամեջի միջնակարգ դպրոց» և N108 հավելվածի «Վանանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-9 հավելվածների:

2. Հաստատել «Արմավիրի N10 հիմնական դպրոց», «Ամասիայի միջնակարգ դպրոց», «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», «Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց», «Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց», «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N11 հիմնական դպրոց», «Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց», «Հովտամեջի միջնակարգ դպրոց» և «Վանանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները՝ համաձայն NN1-9 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-02-10 17:21:39 GMT+4
Հավաստված է ՀԵԼՊ-ի կողմից

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի փետրվարի 10-ի ՆՄՈ/105-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. «Արմավիրի N 10 հիմնական դպրոց»
2. «Ամասիայի միջնակարգ դպրոց»
3. «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց»
4. «Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց»
5. «Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց»
6. «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց»
7. «Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց»
8. «Հովտամեջի միջնակարգ դպրոց»
9. «Վանանդի միջնակարգ դպրոց»

:»:

Недействительная подпись

VERIFIED OCSP 10.02.2025 17:06:44 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**